

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

**«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի  
նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-382-03.10.2022-ՖՎ, ՏՀ, ԱՍ, ԱռՀ, ՏՏԳԸ, ՏԵ, ՊԻ, ԱՀ,  
ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ-011/0) վերաբերյալ**

Կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծն (փաստաթղթային կոդ՝ Կ-382-03.10.2022-ՖՎ, ՏՀ, ԱՍ, ԱռՀ, ՏՏԳԸ, ՏԵ, ՊԻ, ԱՀ, ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**ԼԻԴԻՅԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

21.10.2022թ.

### ***Իրավական փորձաքննության արդյունքները***

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի մի շարք հոդվածներում կիրառվում է «դրամ» հասկացությունը, իսկ Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության դրամ» հասկացությունը: Նախագծի ամբողջ տեքստում առաջարկում ենք միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պահանջը՝ *«Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»*: Առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում կիրառել «Հայաստանի Հանրապետության դրամ» ձևակերպումը՝ հիմք ընդունելով «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» օրենքի 3-րդ հոդվածի չհամարակալված 1-ին պարբերության 1-ին կետի «ա» ենթակետում սահմանված հասկացությունը, այն է՝ *«Հայաստանի Հանրապետության արժույթը՝ Հայաստանի Հանրապետության դրամը»*, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ *«Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաժանոք հասկացություններ կամ տերմիններ»*:

2. Նախագծի 5-րդ հոդվածում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացությունը, մինչդեռ «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացության կրճատ տարբերակը՝ «(այսուհետ՝ Կառավարություն)», սահմանված է Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում: Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է հետևյալ իրավակարգավորումը՝ *«Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը»*: Այսպես՝ հաճախակի կիրառվող երկար արտահայտության կրճատ տարբերակը նախ պետք է սահմանել 1-ին իսկ կիրառումից հետո: Հիմք ընդունելով վերոգրյալն, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում չսահմանել քննարկվող հասկացության կրճատ տարբերակը,

Նախագծի ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը՝ համապատասխան հոլովածներով, փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովածներով:

3. Հարկ ենք համարում նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՛ն «և», կա՛ն «կամ» շաղկապը, միչդեռ «և (կամ)» գրելածևը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում վերանայել քննարկվող շաղկապների կիրառությունը:

4. Նախագծի 9-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ կետում կիրառված բոլոր «սույն ենթակետում» բառերն առաջարկում ենք փոխարինել «սույն կետում» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ *«Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի»:*

5. Նախագծի 9-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետում նշված «23-րդ հոդվածի 1-ին կետին» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «23-րդ հոդվածի 1-ին մասին» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:

#### ***Եզրահանգում***

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված իրավակարգավորումներում Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ, հաշվի առնելով Նախագծի առանձնահատկությունները, ներկայացված դիտարկումների հիման վրա, կարծում ենք՝ անհրաժեշտ է ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Ն.Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

13.10.2022թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման  
անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՁԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Ն.Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

13.10.2022թ.

### ***Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները***

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի  
Նախագիծը քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական  
վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնում:

Նախագիծը հիմնականում համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային  
ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության  
բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային  
հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք  
նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

1. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ  
օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի, բացատրագիրը պետական բյուջեի մասին  
օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է, որը ներառում է պետական  
բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը՝ ըստ օրենքով  
սահմանված հարկային և այլ եկամտատեսակների: Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով  
սահմանվում է, որ պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են հարկային եկամուտները,  
պետական տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները, իսկ 2-րդ մասով

ներկայացված են հարկային եկամուտները՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ և այլն: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ 2023 թվականի պետական բյուջեի ուղերձում բացակայում են առանձին հարկատեսակների գծով կանխատեսվող ցուցանիշներն ու դրանց հիմնավորումները, ինչպես նաև առաջիկա տարում պլանավորվող հարկային եկամուտների բացվածքը: Ի դեպ, դրան զուգահեռ, բավականաչափ մանրամասնեցված են ներկայացված պետական տուրքերի աճը պայմանավորող գործոնները և կանխատեսումներ: Մեր կարծիքով, նշված իրավիճակը ոչ միայն չի բխում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածների պահանջներից, այլև հակասում է բյուջետային ուղերձի տրամաբանությանն ու նպատակային նշանակությանը:

2023 թվականին բարձր տնտեսական աճի պայմաններում կառավարությունը նախատեսում է իրականացնել հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև հարկային օրենսդրության բարեփոխումներ: Վերջիններիս արդյունքում սկսկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շուրջ 0.5 տոկոսային կետով բարելավում, որի արդյունքում այն կկազմի ՀՆԱ-ի 23.7%-ը:

Այս առումով, 2023 թվականի բյուջետային ուղերձում առանձին հարկատեսակների գծով կանխատեսումների, ինչպես նաև հարկային եկամուտների սկսկալվող աճի բացվածքի և այն պայմանավորող գործոնների վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք և ամբողջական կերպով գնահատել և պատկերացում կազմել ինչպես նախատեսվող վարչարակական միջոցառումների արդյունավետության, հարկաբյուջետային ցուցանիշների փոփոխության միտումների, այնպես էլ պլանավորվող ցուցանիշների իրատեսականության և արժանահավատության վերաբերյալ: Հետևաբար, կարծում ենք, որ բյուջետային փաստաթղթի ամբողջականության ապահովումը ենթադրում է վերը նշված կանխատեսումների համակողմանի և մանրակրկիտ ներկայացում, ինչն էլ, ցավոք, բացակայում է:

2. Առաջիկա տարում հանրապետության տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսումները, կարծում ենք, կարելի է բավականաչափ հուսադրող համարել այն առումով, որ նկատվում է կորոնավիրուսային համավարակի և պատերազմական գործողությունների տնտեսական հետևանքների հաղթահարման միտումների ձևավորում, թեև մյուս կողմից՝ գնաճային ցուցանիշների աճը ստիպում է հատուկ ուշադրություն դարձնել տնտեսական աճի և հատկապես ՀՆԱ-ի աճի որակական կողմին (տես աղյուսակ 1-ը):

Մասնավորապես, ըստ ՀՀ կառավարության կանխատեսումների, անվանական ՀՆԱ-ն 2023 թվականին կկազմի մոտ 9.3 տրլիոն դրամ, որը մոտ 12 տոկոսով գերազանցում է ընթացիկ

տարվա կանխատեսվող մակարդակը (1.0 տրիլիոն դրամ) և 33 տոկոսով՝ նախորդ տարվա փաստացի մակարդակը (մոտ 2.3 տրիլիոն դրամ): Ըստ կանխատեսումների, զգալիորեն կակտիվանա նաև տնտեսական աճը, որը 2021 թվականի 5.74 տոկոսից հետո 2022 թվականին կկազմի 11 տոկոս, իսկ 2022 թվականին՝ 7.0 տոկոս: Ի դեպ, հարկ է նկատել, որ 2022 թվականին սպասվող տնտեսական աճի ցուցանիշն ամենաբարձրն է վերջին չորս տարիների համար:

Աղյուսակ 1.

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան 2019-2023 թվականներին

	2019	2020	2021	2022	2023
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	6,543.3	6,181.9	6,983.0	8,293.7	9,317.9
Տնտեսական աճ (%)	7.6	-7.2	5.7	11.0	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ (%)	1.0	1.8	6.9	7.0	5.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ, %)	1.8	0.7	3.7	8.5	3.6
Գնաճ (միջին, %)	2.5	1.4	1.2	8.1	5.6

Չնայած 2022 թվականին սպասվող տնտեսական աճի բարձր ցուցանիշին, 2023 թվականի համար տնտեսական աճի կանխատեսումը բավականաչափ համեստ է: Նման գուսպ գնահատականի հիմքում, կարծում ենք, ընկած են արտաքին գործոնների, ինչպես նաև գնաճային ցուցանիշների համեմատաբար բարձր մակարդակները, որոնք էլ «թելադրում» են տնտեսական աճի որակական հիմնական բնութագիրը: Մասնավորապես, 2022 թվականին ակնկալվող 11 տոկոս տնտեսական աճը հիմնականում հետևանք է Ռ-Գ-ից դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի աննախադեպ ներհոսքի, ինչպես նաև ՏՏ տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխման, ինչպես նաև պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից Ռ-Գ ներմուծման շուկայի սահմանափակումների արդյունքում ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման: Իսկ 2023 թվականին ակնկալվող 7 տոկոսը տնտեսական աճը զգալիորեն պայմանավորված կլինի սպասվող արտաքին տնտեսական միջավայրով, ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքի ու ՏՏ ոլորտի ընկերությունների տեղափոխման արդյունքում առաջացած դրական զարգացումների որոշակի պահպանմամբ: Այս առումով, կարելի է նշել, որ կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշը հիմնականում կախված կլինի արտաքին գործոնների ազդեցությունից, ինչը պարունակում է որոշակի ռիսկեր: Ի դեպ,

Կառավարության կողմից արտաքին միջավայրից բխող տնտեսական աճը կրճատող ռիսկերից առանձնացվում են ՌԴ-ից մարդկանց և կապիտալի սպասվածից ավելի քիչ հոսքը, ինչպես նաև ՀՀ տեղափոխված ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ-ում մնալու անորոշությունները: Այս տեսանկյունից, տնտեսական աճը պայմանավորող գործոնների տեսանկյունից իրավիճակը կարող է մտահոգիչ ներկայանալ այն առումով, որ հնարավոր ռիսկերի դրսևորման (ինչի հավանականությունը փոքր չէ) պարագայում կգրանցվի ավելի փոքր տնտեսական աճ՝ ինչն էլ, իր հերթին, կանդրադառնա կանխատեսվող բյուջետային եկամուտների ու ծախսերի վրա: Կարծում ենք, նման իրավիճակում նպատակահարմար կլինի նախատեսել եկամտի լրացուցիչ աղբյուրներ՝ տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի չսպասելիքով դեպքում բյուջետային մուտքերի գծով «ճեղքվածքը» ծածկելու համար, քանի որ կանխատեսվող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ապահովումը մեծապես պայմանավորված կլինի արտաքին գործոններով:

Միևնույն ժամանակ, տնտեսական աճի կանխատեսվող մակարդակի ապահովումը որոշակի հիմք կհանդիսանա հետճգնաժամային փուլում տնտեսության վերականգնման ու զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և հարկաբյուջետային ցուցանիշների բարելավման համար:

3. Տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի ապահովումը, բացի ռուս-ուկրանիական հակամարտությամբ պայմանավորված գործընթացներից, կախված կլինի նաև երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, ինչպես նաև արտաքին տնտեսական գործոններից և համաշխարհային տնտեսության զարգացումներից: Համաձայն 2023 թվականի բյուջետային ուղերձի, առաջիկա տարում արդյունաբերությունը կաճի 5.0 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 2.2 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 15.6 տոկոսով, շինարարության ոլորտը՝ 16.9 տոկոսով: Կարծում ենք, տնտեսական աճի ճյուղային կառուցվածքը շարունակում է մտահոգիչ մնալ՝ հատկապես դրա որակի բարելավման տեսանկյունից: Կառավարության գնահատականների համաձայն. «2023 թվականին տնտեսական աճից առաջանցիկ կլինեն շինարարության և ծառայությունների ճյուղերի աճերը: Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես դրական ազդեցություն կունենան տնտեսական աճի վրա: Ամբողջական պահանջարկը ևս կաճի՝ պայմանավորված ինչպես ներքին պահանջարկի, այնպես արտահանման (հատկապես՝ ծառայությունների արտահանման մասով) աճով»: Ըստ էության, նման լավատեսական կանխատեսումների հիմք են հանդիսացել 2022 թվականին ձևավորված իրողությունները և դրանց նպաստած գործոնները: Այս առումով, հատկապես ուշադրության արժանի է շինարարության ոլորտում կանխատեսվող 16.9 տոկոս

աճը, որն ամենաբարձրն է մյուսների համեմատությամբ: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի նոյեմբերի 17-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը (ՀՕ-360-Ն), որով 2023 թվականից սկսելու են կիրառվել ստացված հիպոտեկային վարկերի մասով տոկոսագումարների վերադարձման սահմանափակումներ, ինչն, անշուշտ, շինարարության նկատմամբ պահանջարկի նվազման հստակ ազդակ կարող է դառնալ: Մյուս կողմից, շինարարության ծավալների խթանման կամ ընդհանուր առմամբ պահանջարկի ընդլայնման տեսանելի գործոններ ներկայումս չեն նկատվում, ինչն էլ ստիպում է որոշակի զգուշավորություն դրսևորել նշված կտրուկ աճի (16.9 տոկոս) նկատմամբ, և այս համատեքստում, կարծում ենք, դետալային բացատրության կարիք ունի:

Տնտեսության ճյուղային կառուցվածքի առումով, Կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը, կարծում ենք, պետք է դառնա դրա փոփոխությանն ուղղված գործնական քայլերի իրականացումը: Մեր կարծիքով, իրականացվելիք տնտեսական քաղաքականության նպատակային թիրախներ պետք է դառնան հարկունակ ճյուղերի զարգացումը, միաժամանակ՝ համեստ դերակատարում վերապահելով հարկազատված ոլորտներին: Այլ կերպ ասած, կարևորելով երկրում տնտեսական աճի ապահովումը, միևնույն ժամանակ, պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը կնպաստի հարկային բեռի հնարավորինս օպտիմալ բաշխմանը և, դրանով իսկ, բյուջետային եկամուտների ավելացմանը:

4. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2 տրիլիոն 301.3 մլրդ դրամի չափով, 2022 թվականի սպասվող 2 տրիլիոն 042.5 մլրդ դրամի, 2021 թվականի փաստացի 1 տրիլիոն 683.8 մլրդ դրամի դիմաց: Այլ կերպ ասած, առաջիկա տարվա բյուջետային եկամուտների պլանավորված ծավալն ընթացիկ տարվա ցուցանիշը գերազանցում է 12.7 տոկոսով կամ 258.8 մլրդ դրամով (տես աղյուսակ 2-ը):

Ակնկալվում է, որ 2023 թվականին հարկային բեռի ծանրությունը բնութագրող հիմնական՝ հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 23.7 տոկոս՝ ընթացիկ տարվա սպասվող 23.2 տոկոսի, 2021 և 2020 թվականների փաստացի 22.7 և 22.4 տոկոսի դիմաց: Բնականաբար, 2023 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 2 տրիլիոն 203.7 մլրդ դրամ՝ 2022 թվականի ծրագրված 1,920.0 մլրդ դրամի, 2021 թվականի, 2020 թվականի և 2019 թվականի փաստացի



մուտքերի համապատասխանաբար՝ 1 տրիլիոն 586.9 մլրդ դրամի, 1 տրիլիոն 385.2 մլրդ դրամի և 1 տրիլիոն 464.3 մլրդ դրամի դիմաց:

Աղյուսակ 2.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2019-2023 թվականներին

Եկամտատեսակը	2019 փաստ	2020 փաստ	2021 փաստ	2022 սպասում	2023 կանխատեսում
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	1,565.5	1,560.7	1,683.8	2,042.5	2,301.3
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,464.3	1,385.2	1,586.9	1,920.0	2,203.7
2. Այլ եկամուտներ	88.8	122.2	84.6	77.9	80.5
3. Պաշտոնական դրամաշնորհներ	12.4	53.2	12.4	44.6	17.1

Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար՝ 17.1 մլրդ. դրամը և 80.5 մլրդ դրամը (ընդհանուր եկամուտների համապատասխանաբար 0.7%-ը և 3.5%-ը): Հարկ է նշել, որ պետական բյուջեի եկամտային կառուցվածքում բոլոր եկամտատեսակների գծով տեղի կունենա անվանական աճ, բացառությամբ պաշտոնական դրամաշնորհների, որոնք կնվազեն 2.6 անգամ:

5. Համաձայն Նախագծի, ինչպես արդեն նշեցինք, առաջիկա տարում 7.0 տոկոս տնտեսական աճի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության 23.7% մակարդակ (ընթացիկ տարվա համեմատ ընդամենը 0.5 տոկոսային կետով աճ), 2022 թվականին՝ 11 տոկոս տնտեսական աճի սպասողականի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության 23.2% մակարդակ (որը 2021 թվականի մակարդակը գերազանցում է 0.5 տոկոսային կետով), իսկ 2020 թվականին, չնայած փաստացի 7.2 տոկոս տնտեսական անկմանը, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը փաստացի կազմել է 22.4% (տես աղյուսակ 3-ը):

## Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և տնտեսական աճը 2020-2023 թվականներին

	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.
	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր
Տնտեսական աճ (%)	-7.2	5.7	11.0	7.0
Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը (%)	22.4	22.7	23.2	23.7

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ հանրապետությունում առկա է հարկային եկամուտների հավաքագրման կայուն և թեկուզ ցածր, բայց աճի կայուն դինամիկա, ինչն էլ պետության հարկային քաղաքականության առումով և հարկային դրույքաչափերի անփոփոխության պարագայում իդեալականին մոտ պատկեր է իրենից ներկայացնում: Այսինքն, եթե միջինժամկետ հատվածում տեղի չեն ունեցել հարկային դրույքաչափերի բարձրացումներ կամ հարկային բազայի էական ընդլայնում, ապա միանգամայն տրամաբանական և հիմնավորված է պնդել, որ այս տարիների ընթացքում ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցությունը կարող էր աճել հիմնականում տնտեսական աճի, սովերային շրջանառության կրճատման և հարկային վարչարարության բարելավման ազդեցությամբ: Սակայն վերը նշված տվյալների դինամիկան փաստում է, որ 2020 և 2021 թվականներին, համապատասխանաբար՝ 7.2% տնտեսական անկման և 5.7% տնտեսական աճի պարագայում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տարբերությունը կազմել է ընդամենը 0.3 տոկոսային կետ, ընթացիկ և առաջիկա տարիների համար կանխատեսվում է, որ 11% և 7.0% տնտեսական աճի պարագայում սպասվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության համապատասխանաբար՝ 23.2% և 23.7% մակարդակ: Սա նշանակում է, որ տնտեսական աճի և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության փաստացի և կանխատեսված ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապերը, 2020-2023թթ. ժամակահատվածի կտրվածքով, առնվազն տրամաբանական կապի մեջ չեն գտնվում, ուստի նկարագրված դինամիկան, կարծում ենք, մանրամասն և փաստարկված բացատրության կարիք է զգում, ինչն էլ, ցավոք, բացակայում է պետական բյուջեի նախագծի բացատրագրում (ի դեպ, նման գնահատման նպատակ էր հետապնդում նաև սույն եզրակացության 1-ին կետում ներկայացված նկատառումը՝ հարկային եկամուտների մանրամասնեցված ներկայացման վերաբերյալ):

Միաժամանակ, հարկեր/ՀՆԱ ցուցանիշի հարաբերականորեն ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման

հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը, կարծում ենք, պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լիարժեք օգտագործման և հատկապես ստվերային հատվածի կրճատման ուղղություններով:

Այս առումով, կարծում ենք, որ հանրապետությունում իրականացվելիք տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը, այլև տնտեսական աճի կառուցվածքի և որակի բարելավմանը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով հարկունակ ճյուղերի զարգացման վրա:

6. Հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային ծախսերի կրճատման: Հարկային ծախսերի գնահատումը շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն պետական բյուջեի ծրագրավորման, այլև հարկային քաղաքականության մշակման, իրականացման և համապատասխան ճշգրտումների կատարման տեսանկյունից, ուստի հարկային ծախսերի հաշվետվության, որպես ինստիտուտի, ներդրման և շարունակական թարմացման գործընթացը բացառիկ կարևորություն է ստանում: 2023 թվականին ընդհանուր հարկային ծախսը գնահատվել է 584,763 մլն դրամի չափով, ինչը 2023 թվականի համար կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 26.5 և 6.3 տոկոս (տես աղյուսակ 4-ը):

Հարկային ծախսերի տարեկան մեծությունը 2023 թվականին կկազմի 584,763 մլն դրամ, ինչը 81,461 մլն.դրամով կամ 16.2 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը գնահատվում են 409,934 մլն դրամ, ինչը 46,638 մլն դրամով կամ 12.8 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվում են 81,464 մլն դրամ, ինչը 2,534 մլն դրամով կամ 3.2 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվում են 93,365 մլն դրամ, ինչը 32,289 մլն դրամով կամ 52.9 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը:

## Հարկային ծախսերի գնահատականը 2023 թվականին (մլն դրամ)

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝	409,934	18.60%	4.40%
1.1.	գյուղատնտեսություն	17,693	0.80%	0.19%
1.2.	առողջապահություն	86,208	3.91%	0.93%
1.3.	կրթություն	35,308	1.60%	0.38%
1.4.	ֆինանսներ և ապահովագրություն	103,696	4.71%	1.11%
1.5.	ԱԱՀ-ի շեմ	60,418	2.74%	0.65%
1.6.	խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում	63,433	2.88%	0.68%
1.7.	ոսկու և քանկարժեք քարերի իրացում	1,701	0.08%	0.02%
1.8.	մարդասիրական օգնություն	6,889	0.31%	0.07%
1.9.	պարարտանյութերի իրացում	5,784	0.26%	0.06%
1.10.	ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում	1,501	0.07%	0.02%
1.11.	սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում	719	0.03%	0.01%

1.12.	ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում	352	0.02%	0.00%
1.13.	Օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ	4,436	0.20%	0.05%
1.14.	այլ օրենքներով տրված արտաոնություններ	2,961	0.13%	0.03%
1.15.	Միկրոբիզնես	18,836	0.85%	0.20%
2	Շահութահարկի գծով, այդ թվում`	81,464	3.70%	0.87%
2.1.	գյուղատնտեսություն, այդ թվում`	45,684	2.07%	0.49%
2.1.1.	կազմակերպությունների շահույթից	2,748	0.12%	0.03%
2.1.2.	Ա/Չ-ների (ֆիզիկական անձանց) շահույթից	42,936	1.95%	0.46%
2.2.	հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ` գյուղատնտեսության	5,431	0.25%	0.06%
2.3.	շահութահարկի նվազեցման արտոնություններ	56	0.00%	0.00%
2.4.	ԱԱՀ-ի շեմ	21,750	0.99%	0.23%
2.5.	Միկրոբիզնես	6,781	0.31%	0.07%
2.6.	SS ոլորտի արտոնություններ	1,761	0.08%	0.02%
3	Եկամտային հարկի գծով, այդ թվում`	93,365	4.24%	1.00%
3.1.	գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ	17,155	0.78%	0.18%
3.2.	Միկրոբիզնես	7,651	0.35%	0.08%
3.3.	Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկ	64,115	2.91%	0.69%
3.4.	SS ոլորտի արտոնություններ	4,444	0.20%	0.05%

Ընդամենը	584,763	26.54%	6.28%
----------	---------	--------	-------

Հարկային ծախսերի տարեկան մեծությունը 2023 թվականին կկազմի 584,763 մլն դրամ, ինչը 81,461 մլն դրամով կամ 16.2 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը գնահատվում են 409,934 մլն դրամ, ինչը 46,638 մլն դրամով կամ 12.8 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվում են 81,464 մլն դրամ, ինչը 2,534 մլն դրամով կամ 3.2 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվում են 93,365 մլն դրամ, ինչը 32,289 մլն դրամով կամ 52.9 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը:

Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Ընդ որում, հատկապես մտահոգիչ է այն իրողությունը, որ դրանց ծավալները վերջին տարիներին արձանագրում են աճի կայուն միտումներ:

Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերաիմաստավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը հարկային կարգավորման գործում և ստեղծել այնպիսի նախադրյալներ, որոնց առկայության պարագայում միայն դրանք կապահովեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական էֆեկտ: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել հարկային արտոնությունների առավելագույն հասցեականություն և բացառել տարբեր եղանակներով դրանցից անհիմն օգտվելու հնարավորությունը, իրականացնել հարկային ծախսերի չափի և ստացված սոցիալ-տնտեսական էֆեկտի համադրում՝ դրանց արդյունավետության գնահատման և չիմնավորված արտոնություններից հրաժարման նպատակով: Բացի այդ, հաշվի առնելով նաև հանրապետությունում ներկայումս ձևավորված հարկային ծախսերի ծավալը, կարծում ենք, ժամանակն է իրականացնել գործող հարկային արտոնությունների համակողմանի վերլուծություն դրանց տեսակներից յուրաքանչյուրի հիմնավորվածության, արդարացիության և սոցիալական ու տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից:

7. Առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 2 տրիլիոն 590.1 մլրդ դրամ, ինչն ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշը գերազանցում է 406.1 մլրդ դրամով: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 78.9%-ը կամ 2,042.5 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 21.1%-ը կամ 547.7 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

Առաջիկա տարում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և պահուստային ֆոնդերի ոլորտին ուղղվելիք միջոցները նախատեսվել են շուրջ 69,306.1 մլն դրամով ավելի՝ համեմատած 2022 թվականի հետ:

2023թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է նաև պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտին հատկացվելիք միջոցների աճ՝ 2022 թվականի համեմատ շուրջ 190,015.2 մլն դրամի չափով, որը հիմնականում ուղղվելու է ռազմական պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության, ազգային անվտանգության, դատական գործունեության և իրավական պաշտպանության ապահովմանը:

Տնտեսական ոլորտին հատկացվող ծախսերի ընդհանուր ծավալն առաջիկա տարում կկազմի 267.5 մլրդ դրամ, որը մոտ 30.3 մլրդ դրամով ավելի է ընթացիկ տարվա ծրագրված ցուցանիշից (կազմելով ընդհանուր ծախսերի 10.3 տոկոսը), իսկ սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում ամենամեծն է՝ 40.3 տոկոս, որը դրամային արտահայտությամբ կազմում է 1 տրիլիոն 046 մլրդ դրամ:

8. Սոցիալական բնագավառի ծախսերը, ընդհանուր առմամբ, 2023 թվականին հիմնականում կպահպանեն նախորդ տարիներին ձևավորված միտումները (տե՛ս աղյուսակ 5-ը): Մասնավորապես, 2019-2023թթ. ժամանակահատվածում կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորումը ՀՆԱ նկատմամբ փոփոխական բնույթ է կրել: 2023թ. համար այս ոլորտների բյուջետային ծախսերի չափաքանակները սահմանելիս առաջնային է դիտարկվել նշված ոլորտների համար ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի առաջանցիկ մակարդակի ապահովումը:

9. 2019-2023թթ. ընթացքում կրթության ոլորտին ուղղված պետական միջոցները կազմել են համապատասխանաբար՝ 129,336.3, 143,796.3, 149,086.3, 193,026.5 և 212,195.2 մլն. ՀՀ դրամ: 2023թ. ոլորտի ֆինանսավորման համար հատկացվելիք 212,195.2 մլն դրամը նախատեսվում է համամասնորեն ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորմանը:

## Սոցիալական ոլորտի 2019-2023թթ. բյուջետային ծախսերը (մլն. դրամ)

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. փաստատված	2023թ. նախագիծ
<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՍԵՆԸ</b>	716,099.00	872,233.8	929,603.02	929,603.0	1,046,018.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	10.9%	14.1%	11.8%	11.8%	11.2%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	43.9%	46.0%	42.6%	42.6%	40.3%
այդ թվում`					
<b>1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	129,336.3	143,796.3	149,086.3	193,026.5	212,195.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.0%	2.3%	2.3%	2.5%	2.3%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	7.9%	7.6%	7.4%	8.8%	8.2%
<b>2.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	453,921.2	546,575.7	620,005.4	581,318.0	648,476.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	6.9%	8.8%	8.9%	7.4%	7%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	27.9%	28,8%	30.9%	26.6%	25%
<b>3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	99,283,0	148,236.7	160,496.8	122,484.1	149,061.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.5%	2.3%	2.3%	1.6%	1.6%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.1%	7.8%	8.0%	5.6%	5.8%



Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. նախագիծ
4. ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	33,558,3	33,625.0	30,424.0	32,774.3	36,285.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.5%	0.2%	0.4%	0.4%	0.4%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	2.1%	1.8%	1.5%	1.5%	1.4%

10. Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2019-2023թթ. համապատասխանաբար կազմել է 99,283,0, 148,236.7, 160,496.8, 122,484.1 և 149,061.9 մլն դրամ: 2023թ. ոլորտին ուղղվող ծախսերը, նախորդ տարվա համեմատ, ավելացել են 26,577.80 մլն դրամով և պլանավորվում են 149,061.9 մլն դրամի չափով, որոնք, հաշվի առնելով 2020-2022թթ. համավարակով պայմանավորված առողջապահության համակարգի համաշխարհային արդի մարտահրավերները, առաջնահերթ ուղղվելու են վերջինիս դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, հանրությանը պատվաստանյութերով ապահովմանը, առողջապահական համակարգի ռիսկերին արագ և համարժեք արձագանքմանը: Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթությունների, առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2023 թվականին ուղղվելու է նաև մարզային առողջապահական կազմակերպությունների շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման աշխատանքների իրականացմանը:

11. Նախագծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 3.1%-ի չափով և կազմում է 288.9 մլրդ դրամ (տես աղյուսակ 6-ը): Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը ՀՀ 2023 թվականին ձևավորվելու է պետական արժեթղթերի տեղաբաշխումից գոյացող մուտքերից, կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի զուտ մուտքերից (տրամադրվածից հանած մարումները):

## ՀՀ 2019-2023թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2019թ փաստ	2020թ փաստ	2021թ փաստ	2022թ բյուջե	2023թ կանխա- տեսում
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները՝ ընդամենը	63,947.9	333,991.8	320,469.5	236,255.7	288,855.9
Ա. Ներքին աղբյուրներ՝ ընդամենը	(13,317.2)	359,379.0	101,218.9	272,217.6	396,464.9
Բ. Արտաքին աղբյուրներ՝ ընդամենը	77,265.2	(25,387.2)	219,250.6	(35,961.9)	(107,609.0)

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2023 թվականին կկազմի 3.1%: ՀՀ 2023թ. բյուջեում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածու-  
թյունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտո-  
նական դրամաշնորհներից):

12. ՀՀ 2023թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքը կկազմի 4,490 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 54.1%-ը, իսկ 2023 թվականի տարեվերջին այն կկազմի 4,879 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 52.4%-ը: (տես աղյուսակ 7-ը):

2022-2023 թվականներին կշարունակվի 2021թ.-ից սկսված հարկաբյուջետային կոնսոլիդացիան, ինչի արդյունքում կառավարության պարտքը զգալիորեն կնվազի: 2022թ.-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 51.0%, իսկ 2023թ.-ին՝ 49.6%: Հատկանշական է այն, որ 2022թ.-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը նպաստող հիմնական գործոնները կլինեն բարձր տնտեսական աճը և դրամի փոխարժեքի արժևորումը, իսկ 2023թ.-ին՝ տնտեսական աճը:

Աղյուսակ 7.

ՀՀ պետական պարտքը 2021-2023 թթ. (մլրդ դրամ)

	2021թ.	2022թ.	2023թ.
ՀՀ պետական պարտք	4,430	4,490	4,879
<i>այդ թվում՝</i>			
արտաքին պետական պարտք	3,192	2,886	2,962
<i>որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք</i>	220	258	254
ներքին պետական պարտք	1,237	1,604	1,917
<i>տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ</i>			
ՀՀ պետական պարտք	63.4	54.1	52.4
<i>այդ թվում՝</i>			
արտաքին պետական պարտք	45.7	34.8	31.8
<i>որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք</i>	3.1	3.1	2.7
ներքին պետական պարտք	17.7	19.3	20.6

Ըստ կանխատեսումների՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,625 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.6 տոկոսը և 2022 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 1.4 տոկոսային կետով (տես աղյուսակ 8-ը): Նշենք, որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի, փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով գործառնություններով:

Աղյուսակ 8.

ՀՀ կառավարության պարտքը 2021-2023թթ.

	31.12.2021թ.	31.12.2022թ.	31.12.2023թ.
ՀՀ կառավարության պարտք (մլրդ դրամ)	4,210	4,232	4,625
ՀՀ կառավարության պարտք	8,768	9,745	10,595

(մլն ԱՄՆ դոլար)			
ՀՀ կառավարության պարտք (% ՀՆԱ-ի նկատմամբ)	60.3	51.0	49.6

2023 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 604.9 մլրդ դրամ, որից 332.8 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 272.1 մլրդ դրամը՝ տոկոսավճարները: Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 249.9 մլրդ դրամ (526.6 մլն ԱՄՆ դոլար):

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարողներ՝

բաժնի պետ՝ Ա. Թամազյան (հեռ.՝ 011 513-668)

գլխավոր մասնագետ՝ Գ. Կիրակոսյան (հեռ.՝ 011 513-603)

20.10.2022թ.

### ***Սոցիալական փորձաքննության արդյունքները***

Կառավարության կողմից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի Նախագիծը:

ՀՀ 2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 2,301 մլրդ դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների գծով 2,204 մլրդ դրամ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի գծով 2023թ. նախատեսվում է 648.5 մլրդ դրամի չափով հատկացումներ, որը ՀՀ 2022 թ. ճշտված բյուջեի համեմատ ավել է 58.7 մլրդ դրամով:

2023թ. բյուջեի նախագծով նախատեսված են աշխատավարձերի գծով բարձրացումներ՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձը 75, 000 ՀՀ դրամ սահմանելու հանգամանքով:

Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «2023 թվականին պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը կազմում է 83 200 ՀՀ դրամ»:

Միաժամանակ, նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն. «յուրաքանչյուր մարմնի պետական ծառայողների տարեկան պարգևատրման ֆոնդի միասնական տոկոսային դրույքաչափը կազմում է այդ մարմնի գծով Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված պետական ծառայողների հիմնական աշխատավարձի տարեկան ֆոնդի 10 տոկոսը»:

Բացի վերոնշյալից, Նախագծի 9-րդ հոդվածի 17-րդ մասով նախատեսվում է, որ Կառավարությանը թույլատրվում է անհրաժեշտության դեպքում՝ *յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի համար նախատեսված բյուջետային միջոցներն արդյունավետ, օգտավետ և (կամ) խնայողաբար կառավարելու արդյունքում առաջացող տնտեսումն ուղղել այդ պետական մարմնի աշխատակիցների պարգևատրմանը՝ ի հավելումն այլ օրենքներով սահմանված պարգևատրման պայմանների, այդ թվում՝ սահմանափակումների:*

Այսպիսով, բազային աշխատավարձի չափի բարձրացման հետևանքով նախատեսվում է աշխատանքի վարձատրության գծով նախատեսվող ծախսերի աճ՝ միջինը շուրջ 10%-ի չափով:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագծով առաջարկվող փոփոխությունները վերաբերում են կենսաթոշակային ապահովման, անապահով սոցիալական խմբերին աջակցության, ժողովրդագրական վիճակի բարելավման, բնակարանային ապահովման, ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության ծրագրերին:

Առողջապահության նախարարության և ԿԳՄՍ նախարարության գծով նախատեսվում է համապատասխանաբար 146.4 մլրդ դրամ (2022թ. ճշտված բյուջեի համեմատ 5,0 մլրդ դրամով ավել) և 250.3 մլրդ դրամ (2022թ. ճշտված բյուջեի համեմատ 5,0 մլրդ դրամով ավել):

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՉԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Լ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հեռ. /011/513618 /ներք.1618/